ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՊԱՎՂՈՍ Զ ՊԱՊԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՎ ՎԱՏԻԿԱՆԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՉԳԵՆ Ա. ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ

ԷՋՄԻԱԾԻՆ

Զերդ Սրբություն.

Հռովմեական Կաթոլիկ Եկեղեցու կարդինալները, համաձայն Եկեղեցու կանոնադրությանց, հավաքվեցին ժողովի, և Միլանոյի Միտրոպոլիտ-Արքեպիսկոպոս Նորին Ամենապատվություն Ջիովաննի Բատիստա կարդինալ Մոնտինիին ընտրեցին, հաջորդելու երջանկահիշատակ Նորին Սրբություն Հովհաննես ԻԳ Պապին: Նա որոշել է ընդունել Պավղոս Զ անունը:

Սուրբ Հայրը պատվել է ինձ՝ պարտականություն դնելով իմ վրա սույն հաճելի իրողության լուրը պաշտոնապես հաղորդելու Զերդ Սրբության և, Զեր միջոցավ, Զեր Եկեղեցուն:

Ս. Հոգին թո՛ղ ներշնչի սրտերը և ուղղի ճիգերը այն բոլոր մարդկանց, որոնք տքնում են Աստուծո սուրբ ժողովի հոգևոր շինության համար, ի կատարումն մեր միակ Տիրոջ աղոթքին, «զի եղիցին մի»:

Իմ լավագույն մաղթանքների և իմ խոնարհ աղոթքի հավաստիքով,

Զերդ եղբայրորեն ի Քրիստոս՝

ԿԱՐԴԻՆԱԼ ՕԳՈՍՏԻՆՈՍ ԲԵԱ

Քաղաք Վատիկան, 25 հունիսի 1963 թ.

ՔՐԻՍՏՈՍԱՀԱՆԴ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՅՆ Ի ԳԱՀԷ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԱՌ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ Տ. Տ. ՊԱՒՂՈՍ Զ ՊԱՊՆ, ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆ ՀՌՈՎՄԱՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ՍՐԲՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ի ՎԱՏԻԿԱՆ, ՀՌՈՄ

Զերդ Սրբություն.

Քաղցր հոգումով կարդացինք Նորին Գերապանցություն Կարդինալ Օգոստինոս Բեայի 25 հուլիս 1963 թվակիր՝ Մեզ ուղղված պաշտոնական գրությունը, ի մասին Զերդ Սրբության ընտրության և գահակալության:

Արդ, Մենք երջանիկ ենք շնորհավորելու Զերդ Սրբությունը Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցվո և Մեր անունով, սրտաբուխ աղոթքով, որ Տերը Զեզ պարգևե քահանայապետական բեղուն գործունեության երկար տարիներ, որպեսզի առավել բաշխվի Սուրբ Ավետարանի լույսը մարդկային աշխարհին մեջ, որպեսզի քրիստոնեական եկեղեցիները առավել սիրեն միմեանց ու գործակցին եղբայրաբար, Աստուծո փառքին նվիրված իրենց միևնույն առաքելության մեջ, և որպեսզի ժողովուրդները առավել մոտենան իրարու բարի հաճությամբ և ըլլա «յերկիր խաղաղութիւն», ի լրումն աստվածային մեծ պատվիրանին:

Հաճեցեք վստահ ըլլալ, թե հայ ժողովուրդի քրիստոնեական հավատքի բազմադարյան կեդրոն Ս. Էջմիածնի Գահի վրա ունիք Զերդ Սրբության լծակից Եղբայր մը, որ Իր աղոթքները միշտ պիտի միացնե Զեր աղոթքներուն, վասն հաստատության ու ծաղկման Քրիստոսի Եկեղեցվոյն և վասն խաղաղության համայն աշխարհին:

Մաքուր սիրով ի Քրիստոս՝

Տուաւ գիրս ի 10-ն յուլիսի
1963 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԲ,
ի վանս Սրբոյ Էջմիածնի:

ՎԱՉԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻ